ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/03

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Գալիմա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Հ. Քոյլոյանի (լիազորագիր տրված՝ 14.01.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.01.2021թ. թիվ 26/26-1/58-2021 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի 22.12.2020թ. թիվ Ե-543 գրության հիման վրա 11.01.2021թ. թիվ 26/26-1/58-2021 գրությամբ նախաձեռնել է «Գալիմա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գալիմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գալիմա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ՆԳ-2021/03 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության պահանջը «ԳԱԼԻՄԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսինքն պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման և պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման միաժամանակյա առկայության դեպքում նոր կարելի փաստել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի մասին: Ի դեպ նշված իրավակարգավորումը ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու երկկողմ շահերը՝ պատվիրատուի և մասնակցի և դրանց համադրության համատեքստում նոր միայն հնարավոր է արձանագրել կիրառելի իրավական նորմերի մասին:

Մասնավորապես նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը պատվիրատուի կողմից 04.12.2020 թվականին կազմված արձանագրությունը չի համապատասխանում իրականությանը մասնակցի կողմից պատվիրատուին՝ 25.11.2020 թվականի հայտի հիման վրա դեկտեմբերի 4-ին մատակարարվել է 500 կգ խնձոր և 100կգ կերակրի աղ, հաջորդ օրը 720 հատ ձու, իսկ մյուս չափաքանակը 500 կգ խնձորը, որոշակի ուշացումով սակայն 07.12.2020 թվականին մատակարարվել է: Ի դեպ պատվիրատուն պայմանագրի կատարման ամբողջ ժամանակահատվածում գործել է անբարեխիղճ և մատակարարման համար նշել հստակ ժամեր, այնինչ պայմանագրով նման դրույթ նախատեսված չի եղել: Պայմանագրի շրջանակում Պատվիրատուի կողմից վերջին ապրանքի մատակարարման պատվերը տրվել է 14.12.2020 թվականին այն 18.12.2020 թվականին ժամը 09:30-11:30 ընկած ժամանակահատվածում մատակարարելու համար: Ստեղծված քննարկումների արդյունքում պատվիրատուն ընդունելով ժամային սահմանափակման անհիմն լինելը պարտավորվել է ճշգրտել ժամկետները, սակայն նույն 18.12.2020 թվականին ժամը 16:30-ին փոփոխել է պատվերը և այն պահանջել 21.12.2020 թվականին ժամը 09:30-11:30 ընկած ժամանակահատվածում: Կրկին անգամ բացատրվել է պատվիրատուին, որ այն էլ երկուշաբթի օրով առավոտ շուտ տեխնիկապես անհնարին է մատակարարել 720 հատ ձու

ժամկետի մեջ: Սակայն առանց լսելու մասնակցի հիմնավորումները 22.12.2020 թվականին պատվիրատուն միակողմանի լուծում է կողմերի միջև կնքված պայմանագիրը:

Պատվիրատուն որպես պայմանագրի լուծման իրավական հիմք նշել է կողմերի միջև առկա մատակարարման պայմանագրի 2.1.1. կետը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը:

Կողմերի միջև 30.12.2019 թվականին կնքված թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-Խ-5-Գ» պայմանագրի 2.1.1. կետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի: Նախ նշեմ, որ սույն կետը չի կարգավորում պայմանագրի միակողմանի լուծումը, այլ սահմանում է միայն ապրանքից հրաժարվելու Պատվիրատուի իրավունքը, այն էլ այնպիսի պարտադիր վավերապայմանի առկայության դեպքում, որ պետք է ապրանքի մատակարարումը ուշացված լինի 10 օրից ավելի: Նախ ընդհանրապես անհասկանալի է, թե՞ 21.12.2020 թվականին մատակարարման ենթակա ապրանքի ուշացման արդյունքում ինչպես է կիրառվել պայմանագրի 2.1.1. կետը, եթե դեռ չի լրացել 10 օրից ավելի նշված պարտադիր վավերապայմանը և երկրորդ ինչպես է այդ կետի հիմքով լուծվել պայմանագիրը, եթե այն նման իրավասություն չի սահմանում պատվիրատուի համար, ուստի պետք է փաստել, որ այդ մասով պայմանագրի լուծումը կատարվել է առանց իրավական հիմքի:

Ինչ վերաբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասին, ապա այն վերլուծելու փոխարեն պարզապես կարտատպեմ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:» Այսինքն սույն իրավական նորմը պայմանգրի լուծման իրավական հնարավորություն է նախատեսում միայն երբ առկա է կողմերի այնպիսի համաձայնություն, երբ պայմանագրում նախատեսված է պայմանագրի միակողմանի լուծման իրավական հնարավորություն, իր բոլոր վավերապայմանների պահպանման դեպքում, ուստի սույն իրավական նորմի կիրառելիությունը անմիջականորեն փոխկապակցված է պայմանագրի այն կետի հետ, որը հնարավորություն է տալիս միակողմանի լուծելու կնքված պայմանագիրը: Իսկ եթե պայմանագրի լուծման դեպքում հղում է կատարվել պայմանագրի այնպիսի կետի, որը նման հնարավորություն չի ընձեռնում, ուստի կիրառելի չէ նաև ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը: Կրկին անգամ նշեմ, որ պայմանագրի 2.1.1. կետը նախատեսում է ապրանքից հրաժարվելու իրավական հնարավորություն պատվիրատուի համար, եթե վաճառողը մատակարարման ենթակա ապրանքը չի մատակարարել կամ ուշացրել է 10 օրից ավելի և իրավական որոշակիության առումով պացուցման և պարզաբանման ենթակա է այն հարցադրումը, թե՞ վաճառողը քանի օր է ուշացրել մատակարարման ենթակա ապրանքը, որի 10 օրից ավելի լինելու պարագայում միայն պատվիրատուն իրավունք կունենա հրաժարվել այդ ապրանքից: Իդեպ պայմանագրում նման նորմի սահմանումը եղել է պատվիրատուի ազատ կամքի արտահայտում և այն չի կնքել ստիպողաբար, ավելին պայմանագիրը մշակվել և մասնակցին է ուղարկվել պատվիրատուի կողմից:

Ուստի ամփոփելով վերոգրյալը պետք է փաստել, որ պատվիրատուի 25.11.2020 թվականի պատվերով ապրանքները մատակարարվել են ամբողջությամբ, որը փաստվում է կից ներկայացվող երկկողմ ստորագրված հարկային հաշիվներով: 14.12.2020 թվականի պատվերը 18.12.2020 թվականին փոփոխվել է, որը ապացուցվում է հետևյալով, նախ համընկնում են պատվերների վերաբերյալ ապրանքի տեսակներն ու քանակները, պատվիրատուն չի կիրառել պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժ, ուստի չի արձանագրել պայմանագրի դրույթների խախտում, իսկ ինչ վերաբերվում է 18.12.2020 թվականին պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված արձանագրությանը, ապա հայտնեմ, որ այն վստահության արժանի փաստաթուղթ չէ, քանզի այն չի առաքվել մասնակցին, ի տարբերություն մյուս երկու դեպքերի երբ կազմվել է նմանօրինակ արձանագրություններ: Եվ ամենակարևորը կրկին անգամ պետք է փաստել, որ պատվիրատուն պայմանագիրը միակողմանի լուծել է 21.12.2020 թվականին մատակարարման ենթակա ապրանքի 1 օր ուշացման համար՝ 22.12.2020 թվականին, որի իրավասությունը չուներ:

Պայմանավորված վերոգրյալով խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության՝ «ԳԱԼԻՄԱ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պահանջը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/03 ընթացակարգի շրջանակներում 19.01.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.12.2020թ. թիվ Ե-543 գրությամբ հայտնել է, որ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-Խ-5-Գ ծածկագրով պայմանագիրը, սննդամթերքի մատակարարման հետ կապված էական խախտումների հետևանքով, միակողմանի լուծվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է Ընկերության տվյալները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/03 ընթացակարգի շրջանակներում 19.01.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ. կնքվել է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-Խ-5-Գ ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

2. Պատվիրատուի կողմից 23.12.2020թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

3. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, Ընկերության

տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 22.12.2020թ. թիվ Ե-543 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2021թ. թիվ 26/26-1/58-2021 գրությունը, «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի 22.12.2020թ. թիվ Ե-543 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գալիմա» ՍՊԸ-ի միջև 30.12.2019թ. կնքվել է ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/3-Ս-Խ-5-Գ ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր:

Պատվիրատուի կողմից ***23.12.2020թ. տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:***

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, ***Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 22.12.2020թ. թիվ Ե-543 գրությամբ:***

Այսպիսով՝ Պայմանագրի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետերի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը***: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:***

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող***

<u>օրվանից:</u> Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, երբ Պայմանագիրը կնքած անձը համարվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, այսինքն՝ 24.12.2020թ.-ից: Սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, թիվ Ե-543 գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին 22.12.2020թ., վերջինս էլ նախաձեռնել է «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ առանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ եկած հիմքի:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել նաև հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով:

Ընդ որում՝ համապատասխան ընթացակարգային ժամկետի սահմանումը չի կարող ինքնանպատակ լինել. տվյալ ընթացակարգային ժամկետի սկիզբը իրավաստեղծ մարմինը

կապել է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ, և հետևաբար ցանկացած ընթացակարգ, որը կնախաձեռնվի դեռևս տվյալ ընթացակարգային ժամկետի հոսքը պայմանավորող փաստի ի հայտ չեկած լինելու պայմաններում, ինքնին կազդի ամբողջ ընթացակարգի իրավաչափության վրա՝ անկախ այն հանգամանքից, թե հետագայում ընթացակարգը նախաձեռնելուց հետո ինչպիսի հանգամանքներ կարող են ի հայտ գալ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերոնշյալ իրավակարգավորման համատեքստում նաև անդրադառնալով Կարգի 45-րդ կետով և 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված ընթացակարգային ժամկետի պահպանման և ժամկետի հոսքի սկիզբը ճիշտ հաշվարկելու իրավաստեղծ մարմնի նպատակին՝ հարկ է արձանագրել, որ այն չի կարող ինքնանպատակ լինել, քանզի ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, ում հետ կնքված պայմանագրի լուծման հետևանքով պայմանագրի մյուս կողմը հիմքերը կարող է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, ունի լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդպիսի գործընթաց չի նախաձեռնվի իր նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ ինքը պատշաճ չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.01.2021թ. թիվ 26/26-1/58-2021 գրությամբ «Գալիմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**